

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՇԵՍԱԿՑԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ
ГОСУЩРЕЖДЕНИЙ
АРМЕНИИ



UNION OF STATE, LOCAL GOVERNMENT
AND PUBLIC SERVICE EMPLOYEES OF
ARMENIA

«30» նոյեմբերի 2022թ.

N 66-01

Առաջարկներ e-draft համակարգի վերաբերյալ

Շատ նախագծեր որոնք պետք քննարկվեն սոցիալական գործընկերության հարթակում, առանց այդ քննարկման տեղադրվում են e-draft հարթակում: Աշխատանքային, սոցիալական, տնտեսական և այլ բնույթի օրենսդրական նախագծերը, մինչ դրանց շրջանառումը, պետք է ներկայացվեն քննարկման և ստանան եզրակացություններ սոցիալական գործընկերների՝ արհմիությունների և գործատուների կողմից: Սոցիալական գործընկերության պարտավորությունը նախատեսված է ՀՀ կողմից վավերացված Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) համապատասխան կոնվենցիաներով, ԱՄԿ Միավորման ազատության կոմիտեի որոշումներով, ինչպես նաև 2020թ. ՀՀ վարչապետի, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Գործատուների հանրապետական միության միջև կնքված Հանրապետական կոլեկտիվ պայմանագրով: Ընդ որում, սոցիալական գործընկերությունը պետք է տեղի ունենա անկախ հանրային քննարկում լինել-չլինելու հանգամանքից: Այդպիսով, որպես սոցիալական գործընկեր կազմակերպություն, ստիպված ենք լինում մեր առաջարկները գրել e-draft հարթակում, սակայն գրավոր առաջարկն, այնուամենայնիվ, հանրային քննարկում չի կարող համարվել:

Առաջարկվում է աշխատանքային, սոցիալական, տնտեսական, ֆինանսական ոլորտների, ինչպես նաև աշխատողների ու նրանց ընտանիքների անդամների հետ այսպես թե այնպես առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը e-draft հարթակում հրապարակելիս նշել, արդյո՞ք դրանք արդեն քննարկվել են սոցիալական գործընկերների հետ, տեղադրելով սոցիալական գործընկերների տրված եզրակացությունը: Դա կհիշեցնի նախագիծը ներկայացնող մարմնին, որ նախագիծը պետք է նախապես քննարկվեր սոցիալական գործընկերների հետ, իսկ հասարակությունը թափանցիկորեն կտեսնի, թե պետական մարմիններն ինչպես են կատարում սոցիալական երկխոսության իրենց պարտավորությանը:

Բացի դրանից, պարզ չէ, թե ո՞վ և ինչպե՞ս է կայացնում ներկայացված առաջարկները ընդունելու կամ չընդունելու վերաբերյալ որոշումները: Դրական համարելով հարթակի գոյությունը՝ այնուամենայնիվ, գտնում ենք, որ այն հանրային քննարկում չի կարող համարվել: Ակնհայտորեն, շատ սակավաթիվ մարդիկ են օգտվում հարթակից, իսկ առաջարկների շատ սակավաթիվ մասն է ընդունվում: Եղել են դեպքեր, երբ մեր

առաջարկները մերժելու հիմնավորումները ընդհանրապես կապ չեն ունեցել առաջարկի հետ և գրեթե անհեթեթ են եղել:

Նախագծերին «Կողմ/Դեմ» քվեարկելու գործառույթը փաստացի չի գործում: Նախ, շատ սակավ թվով անձինք կարող են օգտվել այդ գործիքից, ինչի դեպքում Կողմ/Դեմ վիճակագրությունը կլինի խեղաթյուրված: Օրինակ, եթե գործիքից օգտվել է ընդամենը 3 օգտատեր, որից 2-ը «կողմ» են քվեարկել նախագծին, գործիքը ցույց կտա, որ 70%-ը կողմ են նախագծին: Ընդ որում, այդ երկուսը կարող են լինել Նախագծի հեղինակները կամ նրանց հետ փոխկապակցված անձինք: Մյուս կողմից, եղել են դեպքեր, երբ բազմաթիվ օգտատերեր «Դեմ» են քվեարկել նախագծին, սակայն գրեթե 90% «Դեմ» քվեարկությամբ նախագիծը միննույն է ընդունվել է:

Առաջարկվում է գործիքը դարձնել իմաստալից: Օրինակ, սահմանել որոշակի թվաքանակ, որի դեպքում Կողմ/Դեմ համամասնությունը պետք է ազդի նախագծի ընդունման/չընդունման վրա:

Առաջարկվում է նախագծերի վերաբերյալ առաջարկներ տրամադրելու դաշտում ստեղծել տեքստի ֆորմատավորման հնարվորություն, կամ գոնե մուտքագրված տեքստի ֆորմատավորման ճանաչում: Ներկայումս, մուտքագրված տեքստի նույնիսկ պարզագույն ֆորմատավորումը հարթակի կողմից չի ճանաչվում և առաջարկի տեքստն ամփոփագրում հայտնվում է առանց պարբերությունների, առանց բառերի միջև համապատասխան տարածությունների պահպանման, ինչը այն դարձնում է ընթերցելիության տեսանկյունից բարդ:

Ազգային ժողովի պատգամավորների կողմից հեղինակած նախագծերը չեն ներկայացվում քննարկման e-draft հարթակում, այնինչ դրանք նույնպես պետք է ներկայացվեն հանրությանը:

Հարգանքով՝

**Հայաստանի պետհիմնարկների,
ՏԻՄ-երի աշխատողների
արհմիության նախագահ**



Անահիտ Ասատրյան